Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2019 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի աստիճանական ազատականացմանն ուղղված գործողությունների շրջանակում՝ նախատեսվում է մշակել էլեկտրաէներգետիկան մեծածախ շուկայի նոր առևտրային կանոնները և էլեկտրաէներգետիկան մանրածախ շուկայի առևտրային կանոնները:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր առևտրային կանոններում կսահմանվեն էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի և էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիաներ ունեցող անձանց կողմից մեծածախ շուկայում գնված էլեկտրական էներգիայի դիմաց վաճառողների օգտին վճարումները երաշխավորող համապատասխան կարգավորումներ:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի աստիճանական ազատականացմանն ուղղված օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ նախատեսվում է վերանայել հանձնաժողովի մի շարք իրավական ակտեր, նպատակ ունենալով նպաստել ՀՀ մեծածախ և մանրածախ շուկաների արդյունավետության բարձրացմանը, տարածաշրջանում միջպետական առևտրի զարգացմանը:

Մասնավորապես, նախատեսվում է վերանայել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- 2004 թվականի սեպտեմբերի 16-ի N109Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի և ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը,
- 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N543Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում

էլեկտրական էներգիայի առաքման և էլեկտրական էներգիայի առուվաճառքի (օրենքով գնման երաշխիք ունեցող 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը,

- 2005 թվականի ապրիլի 22-ի N43Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրի օրինակելի ձևը,
- 2005 թվականի ապրիլի 29-ի N48Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի (արտադրող-արտահանող) պայմանագրի և էլեկտրաէներգիայի առուվաճառքի լրացուցիչ (հաշվեկշռող) պայմանագրի օրինակելի ձևերը,
- 2005 թվականի մայիսի 25-ի N60Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման (արտահանող-հաշվարկային կենտրոն) պայմանագրի օրինակելի ձևը,
- 2005 թվականի մայիսի 31-ի N66Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման (արտահանող-հաղորդող) պայմանագրի օրինակելի ձևը,
- 2005 թվականի հունիսի 28-ի N89Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման (արտահանող-համակարգի օպերատոր) պայմանագրի օրինակելի ձևը,
- 2015 թվականի մայիսի 6-ի N102Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի առուվաճառքի (էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (կոգեներացիոն) կայաններ-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը,
- 2015 թվականի մարտի 4-ի N29Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում ներկրման և արտահանման նպատակներով էլեկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագրերի օրինակելի ձևերը,

- 2017 թվականի մայիսի 31-ի N218Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման, էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերի օրինակելի ձևերը,
- 2016 թվականի օգոստոսի 31-ի N242Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման (բաշխող-սպառող (որակավորված սպառող)) և էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայության մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը,
- 2013 թվականի նոյեմբերի 1-ի N374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը:

«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բխող՝ կմշակվեն նաև էներգետիկայի բնագավառում նոր պայմանագրերի օրինակելի ձևեր:

Հաշվի առնելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով սահմանված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ հանձնաժողով հաշվետվություններ ներկայացնելու պահանջը, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություններով սահմանվել են էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի և էլեկտրական էներգիայի մատակարարման նոր լիցենզիաների տեսակներ, և հաշվի առնելով ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի N1010-Լ որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի 3-րդ կետի 2-րդ ենթակետը, էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի և էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիաներ ունեցող անձանց գործունեության ֆինանսական և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ ստանալու նպատակով վերջիններիս համար կմշակվեն համապատասխան տեղեկատվական ձևեր:

Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն ստանալու նպատակով նախատեսվում է սահմանել «ԷՖԱրՎի Մասրիկ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի արտադրության փուլում հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների անհատական ձևեր:

Նախատեսվում է էլեկտրաէներգիայի բաշխման ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձի կողմից ներկայացված՝ բաշխման ցանցային կանոնների նախագծի քննարկում, համաձայնեցում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ և հաստատում: ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի բաշխման ցանցային կանոններով կկանոնակարգվեն բաշխման ցանցի զարգացման պլանավորման, բաշխման ցանցի օպերատիվ կառավարման, էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորման և կարգավարման, բաշխման ցանցին նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերի, ինչպես նաև նոր հզորությունների միացմանն առնչվող հարաբերությունները:

Նախատեսվում է Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կողմից ներկայացված՝ էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների փոփոխությունների վերաբերյալ առաջարկների քննարկում, համաձայնեցում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ և հաստատում: Փոփոխությունները նպատակ ունեն ապահովելու «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, էլեկտրաէներգետիկական շուկայի մոդելի և էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմների հայեցակարգերի համապատասխանությունը:

Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի լրացուցիչ պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով նախատեսվում է իրականացնել հանրային կազմակերպությունների 2018 և 2019 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող

գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը: Հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգի արդյունքները հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախատեսվում է հաստատել խոշոր էլեկտրակայանների 2020 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունները, որն իրականացվում է հանձնաժողովի 2017թվականի մայիսի 17-ի №161Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների 16-րդ գլխով սահմանված կարգով և ժամկետներում:

Նախատեսվում է մշակել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ներդրումային գործունեության վերլուծության համապատասխան կարգ, որը կսահմանի այն ներդրումային ծրագրերի համաձայնեցման ընթացակարգը, որոնց շրջանակներում իրականացված ներդրումները հետագայում լրիվ կամ մասնակիորեն պետք է ներառվեն լիցենզավորված անձի սակագնում:

Նախատեսվում է իրականացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եռամսյակային ցուցանիշների ուսումնասիրություն, ամփոփում և հրապարակում հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Նշված գործառույթի իրականացումն ուղղված է էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման ընթացակարգի վերլուծությանը, միացման ժամկետների պահպանման վերահսկողությանն ու դրանց խախտման պատճառների որոշմանը: Գործառույթի իրականացման նպատակն է բարձրացնել էլեկտրական ցանցին միացման գործընթացի կազմակերպման արդյունավետությունը:

Նախատեսվում է այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայության վճարների չափի հաշվարկման մեթոդիկայով սահմանված ծառայությունների վճարների և փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունների վերանայում:

Նախատեսվում է լրամշակել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները, որի ընթացքում հաշվի կառնվեն ոլորտում առկա խնդիրները և բաժանորդների դիմում-բողոքները:

Ներկայումս իրականացվող վերլուծությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ նախատեսվում է լրամշակել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №381Ն որոշմամբ հաստատված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձի կողմից հանձնաժողով ներկայացվող բաժանորդների խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ տեղեկատվության ձևերը:

Նախատեսվում է լրամշակել նաև «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՋ №0001 լիցենզիայի պայմանները, ինչպես նաև վերանայել ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները:

Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի 2014 թվականի փետրվարի 20-ի №056-ՀՆ հրամանով նախատեսված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ոլորտում հրապարակված տեղեկատվության թարմացում:

Նախատեսվում է մշակել արտակարգ պատահարների արագ արձագանքման ծառայության 112 (911), հրշեջ ծառայության 101, Հայաստանի Հանրապետության ոստիկանության 102 և շտապ օգնության 103 համարներին կատարվող կանչերի (հաղորդագրությունների) դեպքում օպերատորի կամ ծառայություններ մատուցողի կողմից իր հաճախորդի (բաժանորդի) կողմից օգտագործվող ծառայության վայրի վերաբերյալ տեղեկությունների (հաճախորդի տեղորոշում) և հաճախորդի անձնական տվյալների բացահայտելու կարգը: Կարգով կսահմանվեն տեղորոշման համակարգի գործարկման պայմանները, տեղորոշման բացահայտման ժամկետներն ու համակարգի տեխնիկական նախագծի համաձայնեցմանը ներկայացվող պահանջները:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով՝ նախատեսվում է

հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2020 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքչափերը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի գործունեության ծրագրի հիման վրա կմշակվի հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագիրը, որտեղ ըստ ժամանակացույցի կարտացոլվեն հանձնաժողովի գործունեության ծրագրով նախատեսված կոնկրետ աշխատանքները: Հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագիրը կհրապարակվի հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախատեսվում է հրապարակել ամփոփ տեղեկատվություն դատական գործերի վերաբերյալ:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: